# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի
## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 58-Լ

«28» հունիսի 2023թ. ք. Էջմիածին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023Թ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.
Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2023 թվականի հունիսի 28-ի հինգերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | [signature] | | | 10. Հրայր Ավետիսյան | [signature] | | |
| 2. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 11. Աննա Կիրակոսյան | [signature] | | |
| 3. Նաիրա Բասենցյան | [signature] | | | 12. Աղասի Բաղդասարյան | [signature] | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | [signature] | | | 13. Նորայր Օհանյան | [signature] | | |
| 5. Ներսես Մելիքյան | [signature] | | | 14. Էմմա Պատուրյան | [signature] | | |
| 6. Վարդան Գրիգորյան | [signature] | | | 15. Էդգար Թամազյան | [signature] | | |
| 7. Կարեն Մովսիսյան | [signature] | | | 16. Արմեն Դավթյան | [signature] | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | [signature] | | | 17. Քրիստինե Հակոբյան | [signature] | | |
| 9. Վահան Հախվերդյան | [signature] | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature, stamp] Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*Վաղարշապատ համայնքի ավագանու*
*Երրորդ նստաշրջանի*
*2023 թվականի հունիսի 28-ի*
*Հինգերորդ նիստի թիվ 58-Լ որոշման*

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀՀ ԵԿՄ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.07.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 63 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 59-Ա

«28» հունիսի 2023թ.

ք. Էջմիածին

## ՀՀ ԵԿՄ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.07.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 63 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 37-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ավագանու 18 հունվարի 2022 թվականի թիվ 24 որոշմամբ ընդունված կարգը ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուժը կորցրած ճանաչել Էջմիածին համայնքի ավագանու 17.07.2020 թվականի «ՀՀ ԵԿՄ Էջմիածնի տարածքային բաժանմունքին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» թիվ 25 որոշումը:
2. ՀՀ ԵԿՄ Էջմիածնի տ/բ-ին սկսած 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը, յուրաքանչյուր ամիս տրամադրել ֆինանսական աջակցություն՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:
3. Ֆինանսական աջակցության վճարումը կատարել համայնքապետարանի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցների հաշվին:
4. Առաջարկել համայնքի ղեկավարին իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/ՀԱզգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | | | | 10. Հրաչյա Ավետիսյան | | | |
| 2. Արսեն Պետրոսյան | | | | 11. Աննա Կիրակոսյան | | | |
| 3. Նաիրա Բասենցյան | | | | 12. Աղասի Բաղդասարյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 13. Նորայր Օհանյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 14. Էմմա Պատուրյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 15. Էդգար Թամազյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 16. Արմեն Դավթյան | | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | | | | 17. Քրիստինե Հակոբյան | | | |
| 9. Վահան Հախվերդյան | | | | | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 60-Ա

«28» հունիսի 2023թ.

ք. Էջմիածին

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 14.06.2023թ. թիվ 2/փ-159 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը:
2. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոց N75/15 հասցեում գտնվող 04-002-0874-0121 կադաստրային ծածկագրով 0.0828 հա մակերեսով հողամասը՝ բնակելի տներ կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերից փոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:
3. Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվեկշռում:
4. Առաջարկել Վաղարշապատ համայնքի ղեկավարին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունը ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշմամբ և Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշմամբ հաստատված հատակագծում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | [signature] | | | 10. Հրաչյա Ավետիսյան | [signature] | | |

2. Արսեն Պետրոսյան

3. Նաիրա Բասենցյան

4. Լիլիթ Միրզախանյան

5. Ներսես Մելիքյան

6. Վարդան Գրիգորյան

7. Կարեն Մովսիսյան

8. Գոհար Նիկողոսյան

9. Վահան Հախվերդյան

11. Աննա Կիրակոսյան

12. Աղասի Բաղդասարյան

13. Նորայր Օհանյան

14. Էմմա Պատուրյան

15. Էդգար Թամազյան

16. Արմեն Դավթյան

17. Քրիստինե Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

### ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

15/06/23թ. N 06/11.2/7569-2023

ՀՀ Արմավիրի մարզ
Վաղարշապատ համայնքի ղեկավար
տիկին Դիանա ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

2023 թվականի ապրիլի 26-ի
N 1870 գրության

Հարգելի տիկին Գասպարյան

Ձեզ ենք տրամադրում ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոց N75/15 հասցեում գտնվող 04-002-0874-0121 կադաստրային ծածկագրով 0.0828 հա մակերեսով հողամասը՝ բնակելի տներ կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքների ամփոփ տեղեկանքն ու դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ
ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725
կատարող Ասթինե Հակոբյան

Վաղարշապատի համայնքապետարան
Մուտք թիվ 1680

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 159

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքը (Էջմիածին քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Վաղարշապատ համայնքի (Էջմիածին քաղաքի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

1. *ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքը (Էջմիածին քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի (Էջմիածին քաղաքի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 04-002-0874-0121 կադաստրային ծածկագրով 0.0828 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր | 04-002-0874-0121 կադաստրային ծածկագրով 0.0828 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Վաղարշապատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Էջմիածին քաղաքի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի (Էջմիածին քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ա.Ղուլարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, «14» «հունիսի» 2023 թ.

СОЗДАНО УЧЕБНОИ ВЕРСИЕИ ПРОДУКТА AUTODESK



СОЗДАНО УЧЕБНОИ ВЕРСИЕИ ПРОДУКТА AUTODESK

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 61-Լ

«28» հունիսի 2023թ.

ք. Էջմիածին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանել՝ 2023 թվականի սեպտեմբերի 12–ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | | | |
| 2. Արսեն Պետրոսյան | | | |
| 3. Նաիրա Բաբենցյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | | | |
| 9. Վահան Հախվերդյան | | | |

| Հ/ՀԱզգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 10. Հրաչյա Ավետիսյան | | | |
| 11. Աննա Կիրակոսյան | | | |
| 12. Աղասի Բաղդասարյան | | | |
| 13. Նորայր Օհանյան | | | |
| 14. Էմմա Պատուրյան | | | |
| 15. Էդգար Թամազյան | | | |
| 16. Արմեն Դավթյան | | | |
| 17. Քրիստինե Հակոբյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ